Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գրադարան Ն. Նազ. լեռներ
19 մայիս 1901

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

ԴԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԷՊ

Թարգմանեց ընագրից

Յ. Զ. Միրզայեանց

ТИФЛИСЪ.
Электропечатня Грузин. Изд. Т—ва. Б.-Ванкск. ул.

1901

891.71
L-46

891.71
L-46

25 SEP 2006

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

25 NOV 2010

ԴԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԷՊ

Թարգմանեց բնագրից

Ե. Զ. Միրզայեանց

ТИФЛИСЪ.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкск. ул.
1901

02.05.2013

17496

Дозволено цензурою. Тифлисъ, 25 апрѣля 1901 г.

Հանրապետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. Մեսրոպի անվան

9689-73

М. Лермонтов

ՏԻԿԻՆ ԵՒԳԵՆԻԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑԻՆ,

որ առաջին անգամ ծանօթացրեց ինձ այս երկի հոյակապ բնագրի հետ, ամենայն յարգանքով նուիրում եմ այս թարգմանութիւնը։

Ց. Զ. Միրզայեանց

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Հրատարակութեան տալով այս թարգմանութիւնը՝ ես յաւակնութիւն չ'ունեմ մտածելու, թէ նա ամեն մասամբ բարձր է Սադաթեանի թարգմանութիւնից, որը ես ունեցել եմ ձեռքի տակ այս աշխատութեան միջոցին։ Մի միտք միայն խրախուսել է ինձ ձեռնարկելու այսպիսի մի դժուար գործի, այն է, որ եթէ դա թերի էլ լինի ուրիշ տեսակէտներից, յամենայն դէպս ընթերցողը նորա մէջ չի հանդիպի այնպիսի խորթացած բառերի եւ ոճերի, որոնք սպրդել են Սադաթեանի թարգմանութեան մէջ, ոչ թէ թարգմանչի յանցանքով, այլ որովհետեւ մեր աշխարհիկ բարբառը նորա ժամանակ սաղմային եւ անկերպարան դրութեան մէջ էր գտնուում։

Իսկ եթէ ընթերցող հասարակութիւնը եւ քննադատութիւնը գտնեն, որ իմ թարգմանութիւնը այլ տեսակէտներից էլ մօտենալ կարող է—ուր մնաց հաւասարուիլ—իր նախորդին, ես, այս աշխատութեան վերաբերութեամբ, ինձ հասած կը համարեմ իմ փառասիրութեան գագաթնակէտին։

Օգտուելով առիթից՝ ես հրապարակով շնորհակալութիւն եմ յայտնում ընդհանրապես այն բոլոր բարեկամներիս, որոնք ժամանակ առ ժամանակ, իմ ռուսերէնի թերութեան պատճառով, ինձ օգնել են ըմբռնելու Լերմոնտովի բարձր լեզուի նրբութիւնները, եւ մասնաւորապես պարոն Տիգրան Յովհաննիսեանին, որ ամենայն համբերութեամբ ինձ հետ անցել է բնագիրը ծայրէ 'ի ծայր։

Թարգմանիչ

ԴԵՄ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I

Թախծալից Դ�ը, աքսորման ոգին,
Թռչում էր օդում մեղապարտ երկրի,
Եւ նորա մոքից խուռն անցնում էին
Ցիշատակները բարեոք օրերի—
Օրերի՛, երբ որ լոյսի մէջ անբաւ,
Գեղափայլ էր նա, քերովբէն անբիծ,
Երբ որ գիսաւոր աստղը սրարշաւ
Տալիս էր նորան ողջոյն ժպտալից.
Երբ որ գիտութեան ծարաւով անչէջ,
Մշուշի միջով յաւիտենային,
Նայում էր անհուն տարածութեան մէջ
Զուարթ աստղերի կարաւաններին.
Երբ որ հաւատում, երբ որ սիրում էր
—Անվիչտ անդրանիկն ըստեղծագործման—
Ոչ չարիք գիտէր, ոչ կասկած ունէր,
Եւ չէր ըսպասնում դեռ եւրս նորան
Դարերի չարքը տխուր, ապարդիւն...
Եւ դեռ շատ ու շատ... եւ դեռ ամեն բան
Նա միտ բերելու չ'ունէր զօրութիւն։

II

Վաղուց, արտաքսուած, նա թափառում էր
Ամայութեան մէջ և անապատան։
Դարի ետևից դարը թռչում էր,
Ինչպէս վայրկեանի ետևից վայրկեան,
Անդուլ կրկնութեամբ և նոյնանման։
Դառնալով իշխան՝ աշխարհի չնչին,
Զարիք էր ցանում առանց հաճոյքի,
Եւ բընաւ մի տեղ իւր չար արուեստին
Չը հանդիպելով ընդդիմադրութեան՝
Զարիքը ձանձրոյթ պատճառեց նորան։

III

Եւ արդ Կովկասի բարձանց վերևում
Ծարագիրն երկնի սլացաւ ազատ։
Որպէս ադամանդ՝ նորա ներքևում
Փայլում է Կազբէկ ձիւնով մշտապատ,
Եւ սևին տալով՝ խորքում հեռաւոր
Որպէս մի ճեղքուած, որպէս օձի բոյն,
Դարեալի կիրճը ձգւում է ոլոր,
Եւ Թերեք՝ ոստնող առիւծի նման,
Բաշը թաւամազ ձգած թիկունքին,
Մըռընչում է խուլ, և վայրի գազան,
Եւ իւրաքանչիւր թռչուն օդային՝
Ճախրելով հանդարտ կապոյտ բարձունքում

Նորան գրոյցին ականջ են դնում,
Եւ ոսկեայ ամպեր սահում են գալիս
Հարաւի կողմից, երկրից հեռաւոր,
Եւ ուղեկցում են նորան դէպ հիւսիս.
Եւ նորա վերայ ժայռերը հզօր,
Գրլուխ խոնարհած, խմբուած միասին,
Ակնապիշ նիրհով և խորհրդաւոր
Ցած են ականում ցոլցոլուն ջրին.
Եւ ամրոցների բարձր աշտարակներ
Կանգնած գագաթին ապառաժների
— Կովկասի դրան հսկայ պահակներ —
Նայում են խրրոխտ՝ մէջիցն ամպերի։
Եւ վայրենի էր, այլ և դիւթական
Աշխարհն Աստուծոյ, բայց դուռդ ոգին
Նայում էր աչքով արհամարհական
Իւր Ստեղծողի գեղեցիկ գործին,
Եւ նորա հրպարտ ճակատի վերան
Չ'արտայայտուեցաւ բընաւին մի բան։

IV

Եւ մի այլ պատկեր արդ նորա դիմաց
Դեղեցկութիւններ սփռեց կենդանի.
Հեռուն, ծաղկահիւս գորգերով ծածկուած՝
Բացուեցան դաշտեր ճոխ Վրաստանի։
Երջանիկ երկիր, բնակավայ՛ր չքնաղ։
Կոթողանման հին աւերակներ,

Ոստուն վտակներ կարկաչածիծաղ,
Գոյն-գոյն քարերով նոցա յատակներ,
Եւ թուփեր վարդի, որոնց սաղարթում
Երգում է սոխակն իւր գեղեցկուհուն,
Բայց պատասխանի չ'են արժանանում
Սիրոյ ձայները քաղցրութեամբ գեղուն.
Ստուեր տարածած չինարներ հսկայ,
Շուրջը բաղեղի պսակ ոլորուն,
Զով քարանձաւներ, ուր տապից օրուայ
Ապաստանում է երկչոտ եղջերուն,
Եւ՝ չողիւն, և՝ կեանք, մրմունջ ծառերի,
Հարիւրահնչիւն ձայների բարբառ,
Հեշտարար շոգը անչունչ կէսօրի,
Շնչառութիւնը բոյսերի հազար,
Ցաւէրժ ոռոգուած՝ պայծառ գիշերը
Ցօղով բուրալից, ցօղով կենսատու,
Եւ չողուն աստղեր, ինչպէս աչերը,
Ինչպէս հայեացքը մատղաշ վրացուհու:
Բայց այդ հրմայքը բնութեան պատկերի
Բացի նախանձից չ'էր զարթեցընում
Դեպ կուրծքի մէջ, դարձած անբերրի,
Ո՞չ նոր զօրութիւն, ոչ նոր ըղձացում,
Եւ այն ամենը, ինչ որ դիտումէր,
Նա արհամարհում և կամ ատում էր:

V

Հոյակապ պալատ, գաւիթ ընդարձակ
Շինել է իշխան Գուդալը ծերուկ...

Նա իւր ճորտերին, վաղուց հպատակ,
Արժել է շատ ջանք և շատ արտասուք:
Վաղորդեան՝ նորա պատերի ստուերը
Ընկնում է լեռան լանջին մերձակից:
Ժայռի մէջ փորուած աստիճանները
Նորա անկիւնի բարձր աշտարակից
Տանում են մինչև Արագվի գետակ.
Եւ փողփողալով նոցա վերայից,
Զգած իւր գլխին սաւան ըսպիտակ,
Իշխանադուստրը Թամարան մատաղ
Զուր վեր առնելու իջնում է յատակ:

VI

Մռայլ ապարանքն ընդ միշտ լռելեայն
Սարի բարձունքից նայում էր հովտին,
Բայց այսօր այնտեղ կայ մեծ խըրախճան,
Հնչում է զուռնան, հոսում է գինին.
Նըշանդրէքն է Գուդալի դստեր,
Եւ հրաւիրուած են իւր ազգականներ:
Նստած է կարին—փռուած գորգերով—
Ընկերների մէջ՝ հարսնացուն չքնաղ.
Մերթ խաղերի մէջ, և մերթ երգերով
Նոցա ժամանակն անցնում է ուրախ:
Հեռաւոր լեռան գագաթներ արդէն
Արևի դէմքը կիսով ծածկել են:
Ահա երգում են նոքա խմբովին,

Եւ ծալի են տալիս չափով զուգահար.
Ահա դահիրան բռնած մէկ ձեռին՝
Ոտքի է կանգնում դեռատի Թամար,
Պատյտ է տալիս իւր գլխի վերև,
Եւ մերթ սրլանում թռչունից թեթև,
Մերթ կանգ է առնում, նայում մի վայրկեան,
Եւ շողշողում են խոնաւ աչքերը
Նորա նախանձոտ թարթիչի ներքև,
Շարժում է նազով մերթ սև յօնքերը,
Մերթ թեքում մի քիչ մէջքը գեղաձև,
Եւ աստուածային ոտիկը նորա
Սահում է, սուրում գորգերի վերայ.
Երեխայական բերկրութեամբ լեցուն
Մերթ ժպտում է նա. և շողը լուսնի,
Խաղալով հեղիկ ջրի մէջ ծփուն,
Նման այդ ժպտին հաղիւ թէ լինի,
Ժպիտ, որ կեանքի ոգին է կարծես,
Ժպիտ, կենդանի՝ մատաղաշուրթեան պէս։

VII

Երդւում եմ աստղով կէս գիշերային,
Փայլովն արևի ելքի և մուտքի,
Ոչ մի չահ պարսից ոսկեայ աշխարհի
Եւ ոչ մի հատիկ իշխան երկրային
Չէ դրոշմել համբոյր այդպիսի աչքի.
Ոչ մի հարէմի ցայտուն շատրուան

Չէ ցօղել բընաւ, տօթի ժամանակ,
Իւր հատիկներով մարգարտանման
Այդպիսի չինար, նազելի հասակ.
Շոյելով ողորկ ճակատը կոյսի՝
Դեռ ևս հոդածին ոչ մի սիրահար
Չէ հիւսարձակել ծամեր այդպիսի։
Քանի եդեմից զրկուեց այս աշխարհ,
Երդւում եմ, այդքան գեղանի էակ
Չէ ծաղկել երբէք արեգակի տակ։

VIII

Վերջին անգամն էր պարում նա, աւաղ...
Ահա սպասում էր վաղ առաւօտեան
Նորան, Գուդալի ժառանգին մատաղ,
Կայտառ զաւակին ազատ բընութեան,
Տխրալից վիճակն ըստարկակեցիկ,
Անծանօթ օջախ և խորթ հայրենիք։
Եւ յաճախակի մի կասկած թագուն
Այդ պայծառ դէմքին ձգում էր ըստուեր.
Բայց այնքան էին չնորհքով զարդարուն
Եւ արտայայտիչ նորա շարժումներ,
Այնպիսի անոյշ պարզութեամբ լեցուն,
Որ եթէ Դևը այդ իսկ միջոցին
Նայէր թռչելիս և նորան տեսնէր,
Ցիշելով նախնի իւր եղբայրներին՝
Կը թեքէր երեսն ու կը հառաչէր...

IX

Եւ Դեը տեսաւ... Ցանկարծ իւր սրտում
Զգաց մի վայրկեան անմեկին յուզում։
Նորա համր հոգու ամայութիւնը
Լցրեց բովանդակ բարերար մի ձայն.
Նորից ըմբռնեց նա սրբութիւնը
Սիրոյ, բարիի և գեղեցկութեան...
Եւ երկար հրճւում, ըսքանչանում էր
Դիտելով անյագ՝ այդ քաղցրը պատկեր,
Այն ինչ բազմօղակ չղթայի նման
Անուրջներն անցեալ իւր երջանկութեան,
Որպէս թէ աստղը աստղի ետևից,
Սահեցին, անցան նորա առջևից։
Անտեսանելի զօրութեամբ դամուած՝
Նա կուրծքի խորքում նոր թախիծ ըզգաց,
Խօսեց նորա մէջ ձայնը զգացման
Մի լեզուով, որ նա անցեալում դիտէր։
Նշան էր արդեօք դա վերածնութեան.
Գայթակղեցուցիչ նենգամիտ խօսքեր
Նա կարող չ'եղաւ դանել իւր մտքում։
Մոռանա՞ր։ Բայց այդ չ'էր տուել Աստուած,
Եւ չ'էր ընդունի Դեը մոռացում...

X

Հանգիստ չը տալով աղնիւ նժոյգին՝
Անհամբեր փեսան դիմում է շտապով

Իւր հարսանիքի ուրախ խնջոյքին։
Երեկոյեան դէմ հասաւ ապահով
Շողուն Արագվի ափերը դալար։
Ծանր ընծաներով ուղտերը բեռնած,
Նորա ետևից ձգուելով երկար,
Քայլում են շարան և կամաց, կամաց.
Հնչում են մեղմիկ նոցա զանգակներ...
Նա, Սինօդալի իշխանը և տէր,
Տանում է իւր հետ հարուստ կարաւան։
Մէջքը բարեկազմ սեղմել է գօտին,
Եւ փայլեցնում է չողն երեկոյեան
Սուր և խանչալի արծաթն ու ոսկին.
Նորա չուխայի բոլորտիքն ամեն
Բանուած է ճարտար ոսկեայ ժապաւէն,
Եւ թեերի հետ խաղում է քամին.
Գեղեցկաքանդակ հրացանը՝ մէջքին.
Թամբը՝ դոյնզդոյն մետաքսով կարուած,
Եւ փնջիկներով սանձը զարդարուած.
Ոսկեգոյն նժոյգն անգին, նորա տակ,
Պատած է ամբողջ փրփուրով ճերմակ.
Նա՝ Ղարաբաղի սերունդը կայտառ՝
Դէպ ալիքների փրփուրը վարար
Փռնչում, խէթ, խէթ նայում է սարից
Լարած ականջով և երկիւղալից։
Վտանգաւոր է լեռան նեղ ուղին.
Վիթխարի ժայռեր կանգնած են ձախից,
Աջից՝ թնդում [illegible]

Հայ գրականության գրադարան
Гос. Библиотека
2002-Арм.ССР
Ա. ԻՄ. Հ. ՄԱՍՆԻԿՅԱՆ
96897

Ուշ է։ Զիւնապատ դագաթին խաղաղ
Մարում են օրուայ վերջին փայլերը.
Մէգը բարձրացաւ. կարմանը դանդաղ
Արագացրեց իւր՝ յամր քայլերը։

XI

Եւ ահա մատուռ ճանապարհի վրան...
Այնտեղ հանդչում է վաղուց առ Աստուած՝
Այժմ սուրբ դարձած ինչ որ մի իշխան,
Վրէժխնդիր ձեռքով արևից զրկուած։
Այն օրից ի վեր կռուի կամ տօնի,
Ուր և՛ ուղևորն ըշտապում լինի,
Միշտ այդ մատուռի սեղանի դիմաց
Մատուցանում է աղօթք երկիւղած.
Եւ պահպանում է աղօթքը նորան
Մահմեդականի դաշոյնից դաժան։
Բայց արհամարհեց կարիճ փեսացուն
Իւր նախնիների այդ սովորութիւն—
Խորամանկ Դիը վրդովեց նորան
Նենգ ցընորքներով և մեղանչական.
Մութի քողի տակ փեսան մտավին
Համբոյր էր տալիս հարսի շրթունքին...
Ցանկարծ դուրս եկան երկու մարդ անյայտ,
Ցեռոյ աւելի... Պայթիւն... Ի՞նչ է այդ։
Հնչուն ասպանդի վերայ բարձրացած,
Եւ ցած սեղմելով փոխանակ ունքերին՝

Խիզախ իշխանը մի բառ իսկ չ՛ասաց.
Շողաց տաճկական հրացանը ձեռին,
Շառաչեց մտրակն, ու որպէս արծիւ
Առաջ նետուեցաւ... Նոր պայթիւն, կռիւ...
Եւ խուլ հառաչանք և վայրի ժխոր
Լսուեցան ձորի խորքում հեռաւոր...
Կռիւը, սակայն, չը տևեց երկար.
Երկչոտ վերացիք փախան դողահար։

XII

Լռեց ամեն ինչ... Կիտուած խմբովին
Շուրջը անկենդան ձիաւորների,
Ուղտերն ահաբեկ մերթ նայում էին,
Եւ լռութեան մէջ խաղաղ գիշերի
Զանգակները խուլ զողանջում էին։
Կարաւանը ճոխ՝ դարձաւ կողոպուտ,
Եւ քրիստոնէից դիերի վերան
Գիշերահաւը գործում է պտոյտ։
Զի սպասում նրանց հանդիստ գերեզման
Քարերի ներքև մի մենաստանի,
Ուր ամփոփուած են նոցա հայրերը.
Չեն խմբուի շուրջը նոցա դամբանի
Հեռաւոր տեղից քոյրեր, մայրերը
Լացով ու կոծով, սուգով վշտահար,
Փաթաթուած իրենց չադրովը երկար։
Բարեպաշտ ձեռքեր, դորա փոխանակ,

Այստեղ, ճամբի մօտ, ժայռի ստորոտին,
Խաչ կը կանգնեցնեն իբրև յիշատակ.
Եւ բաղեղները կ'ամեն գաղուանքին,
Փաթելով խաչին, ու կը պատեն նրան
Թարմ տերևներով զմրուխտանման.
Եւ յաճախ, յոգնած, ոտաւոր ճամբորդները,
Շեղուելով ճամբից՝ կը հանգստանան
Այդ հովանու տակ աստուածանուէր...

XIII

Սրլանում է ձին եղջերուից արագ,
Ռազմի է դիմում կարծես սանձարձակ.
Այնպէս չնչում է, խորդում է ուժգին՝
Կողքերը, կ'ասես, պատռուում լինին։
Ցանկարծ, վազելիս, մերթ կանգ է առնում,
Հովի ձայներին ականջ է դընում,
Կարմիր ռունգերը բանալով ընդլայն.
Նրբեմբն յանկարծ գետնին բարձրաձայն
Դոփում է պայտի դամերով հնչուն,
Եւ արձակ բաշը յանձնելով քամուն՝
Առաջ է նետուում որպէս խելագար։
Նստած է մէջքին հեծեալ անբարբառ.
Նա թամբի վերայ վեր-վեր է նետուում.
Ամուր խրուած են ոտքերն ասպանդում.
Գլուխը դրած նժոյգի բաշին՝
Չէ վարում սանձով այլ ևս նա ձին,
Եւ տեսնուում են լայն հետքեր արեան

Նորա թանկագին չափրաղի վերան...
Դու քո տիրոջը, նժոյգ ոտնարագ,
Հանեցիր կռուից որպէս մի սլաք,
Բայց օսետինի գնդակն անիրաւ
Նորա յետևից մութի մէջ հասաւ։

XIV

Գուդալի տան մէջ սև սուգ է տիրում,
Խմբուած են մարդիկ դղեակի բակում.
Ո՞ւմ ձին է այդ, որ՝ այդպէս հև ի հև
Եկաւ, փռուեցաւ դարպասի առջև։
Եւ ով է արդեօք հեծեալն անկենդան։
Կնճռոտ հետքերը ռազմային յուզման
Թուխ ճակատի վրայ տեսնուում են դեռ։
Արիւնաներկ են հագուստն ու զէնքեր,
Եւ ջղաձգական գալարմամբ վերջին
Բաշը ձեռքի մէջ սեղմել է ուժգին։
Երկար չը սպասեց նայուածքդ սիրուն,
Ո՞վ հարս, քո ջահել փեսայիդ գալուն։
Պահեց նա խոստումն իւր իշխանական.
Եկաւ նա արագ հարսնիքի խրախճան...
Սակայն այլ ևս կտրիճը բընաւ
Չի նստի, աւա՜ղ, նժոյգ սրարշաւ...

XV

Կայծակի նման պատիժն երկնային
Իջաւ այդ ուրախ ընտանեաց գլխին։

Անկողնի վերայ ընկաւ վշտահար,
Լալով, հեծելով, Թամարը թշուառ.
Կուրծքը ծփում է, ծանր է իւր շնչմունք,
Կաթիլ առ կաթիլ հոսում է արցունք...
Եւ ահա կարծես գլխի վերևից
Լսում է կոյսը մի ձայն դիւթալից.
«Մի՛ լար, զաւակըս, մի՛ լար դու 'ի զուր։
Քո արցունքները չը պիտի թանան
Կենսատու ցողով դիակն անբարբառ,
Նոքա լոկ կ'այրեն այտեր կուսական,
Մէգով կը պատեն աչերըդ պայծառ.
Նա այժմ հեռու է, ըզգալ չի կարող
Եւ գնահատել վիշտըդ, Թամարա.
Փաղաքշում է արդ լոյսը երկնաշող
Հոգեղէն հայեացքն աչքերի նորա.
Նա լսում է արդ դրախտի դեղգեղանք...
Ի՞նչ արժէ չնչին ցընորքը կեանքի
Եւ մի հէգ կոյսի լացն ու հառաչանք
Նորան, որ հիմա հիւր է երկնքի։
Ո՛չ, կորուստն ունայն մի արարչութեան,
Հաւատա՛, ով իմ հրեշտակ երկրային,
Արժան չէ բընաւ, որ մէկ իսկ վայրկեան
Տխրութիւն պատէ այդ սրտիդ անգին։
«Օդածաւալ ովկիանում
Մէգի միջով լողում են,
Անառադաստ և անդեկ,
Պերճ հոյլերը լուսեղէն.

Դաշտերի մէջ անչափ
Լայնատարած եթերի,
Ճամբորդում են խումբերը
Քուլա, քուլա ամպերի.
Հանդիպելիս, զատուելիս,
Չ'են բերկրանում, չ'են տխրում,
Ապագայի չ'ունին իղձ,
Եւ անցեալի զղջացում։
Դժբախտութեան ժամանակ,
Նորանց միայն միտքդ բեր,
Եղիր անվիշտ նոցա պէս,
Դէպի աշխարհն՝ անտարբեր։
«Հազիւ որ գիշերն իւր մութ վերարկուն
Կովկասի լեռան բարձունքին սփռէ,
Հազիւ որ աշխարհն ըկղմած 'ի քուն՝
Դիւթական խօսքով կախարդուի, լռէ.
Հազիւ զեփիւռը ժայռերի վերայ
Շարժել ըսկսի խոտը թառամած.
Եւ թաքուն նստած խաւերում նորա՝
Թռչնիկն օդի մէջ ցատկէ մթամած,
Հազիւ որ որթի սաղարթի տակին,
Ծծելով անյագ ցողը երկնքի,
Գիշերուայ ծաղկի թերթերը բացուին.
Երբ հազիւ ոսկեայ դէմքը լուսնեակի
Լեռան եռևից հանդարտ բարձրանայ,
Եւ դաղտագողի նայի քո վերայ—
Ես, ով կոյս չքնաղ, կը թռչեմ քո մօտ,

Քեզ հիւր կը մնամ մինչև առաւօտ,
Եւ քո մետաքսեայ արտևանունքին
Ոսկեայ երազներ կը ցօղեմ լուին...»

XVI

Լռեցին բառերն... Եւ ահա հեռւում
Հնչիւնի եռուն հալուեցաւ հնչիւն։
Նա, վեր ցատկելով, չորս կողմն է նայում...
Անբացատրելի մի չվոթութիւն
Տիրում է կուրծքին,—սարսափ, տխրութիւն
Եւ բուռն աւիւնը ոգեւորութեան
Ոչինչ բաներ են բաղդատմամբ նորան.
Ըզգացմունքները բոլորն ալեկոծ՝
Նորա սրտի մէջ յանկարծ եռացին։
Երակների մէջ սրլանում էր բոց,
Կապանքներն ամեն պատռում էր հոգին,
Եւ դեռ այդ ձայնը նոր ու հրաշալի
Թւում էր նորան թէ հնչում լինէր։
Եւ վաղորդեան մօտ՝ քունը ցանկալի
Փակեց Թամարի վաստակած աչքեր.
Բայց տեսիլներով մարգարէական
Եւ օտարոտի նա յուզեց նորան.
Անխօս մի եկուոր և մշուշային,
Դերաշխարհային գեղով զարդարուած,
Թեքուեցաւ հեզիկ կոյսի սնարքին.
Եւ նորա հայեացքն այնպէս տխրամած,

Այնպիսի սիրով նայում էր վերան,
Կարծես այցելուն խղճում էր նորան։
Չ'էր նա քերովբէ եդեմաբընակ,
Նորա պահապան հրեշտակն երկնատուր,—
Ծիածանագոյն չողահիւս պսակ
Չ'էր պճնում նորա մազերը դանդուր.
Չ'էր դժոխապետ ոգին նա դաժան,
Մշտնջենապէս տանջուողն յանցաւոր.
Օ՜հ, ոչ։ Նըման էր՝ նա պարզ երիկուան,—
Ո՛չ լոյս, ոչ խաւար, ոչ գիշեր, ոչ օր։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I

«Հայրիկ, իմ, հայրիկ, մի սպառնար այդպէս,
Մի յանդիմանիր քո խեղճ Թամարին։
Ես արտասուում եմ։ Լացը տեսնում ես...
Եւ դեռ չ'են սրքա չլթերս առաջին...
Զը պիտի լինեմ ոչ ոքի կինը—
Փեսացուներիս սամ ինձանից.
Սառ հողը մտաւ իմ ամուսինը—
Ես ուրիշ մարդու սիրտ չ'եմ տայ նորից։
Այն օրից, երբ մենք սարի ստորոտին
Թաղեցինք նորա արիւնոտ դիակ,
Վրդովում է ինձ բանսարկու ոգին
Անդիմադրելի ցնորքով մեղսունակ.
Շարք, շարք երաղներ տարակերպ, տրտում,
Ցուզում են գիշերն ինձ անդորրալից.
Ցերեկն աղօթել չ'եմ կարողանում,—
Միտքս հեռու է բառերի ձայնից.
Երակներիս մէջ կրքակ է հոսում...
Օրէցօր խամրում, ցամաքում եմ ես։
Տանջւում է, հայր իմ, հոգիս իմ ներսում.
Հայր, խնայիր ինձ, աղերսում եմ քեզ։

Ուղարկիր հեռու մի սուրբ մենաստան
Քո ցընորամիտ թշուառ դստերը.
Փրկիչն ինձ այնտեղ կը լինի պաշտպան,
Վիշտս կը հեղեմ նորա ոտքերը։
Զը կայ ինձ բերկրանք այլ ես աշխարհում...
Պատսպարելով սրբութեամբ խաղաղ՝
Թող ինձ, նախօրօք, իւր մռայլ ծոցում
Ընդունի խուցը, որպէս մի դադաղ»։

II

Եւ մենակառոյց մի սուրբ մենաստան
Ազգականները տարան Թամարին,
Եւ կոպիտ քուրձով ապաշխարութեան
Նորա մատղահաս կուրծքը պատեցին։
Բայց միանձնուհու զգեստի տակ ծածկուած,
Ինչպէս և առաջ մետաքսի տակին,
Անսուրբ ցընորքով ամբողջ համակուած
Բաղխում էր սիրտը Թամարի ուժգին։
Մոմերի լոյսով, սեղանի դիմաց,
Աղօթքի պահուն ասուածանուէր,
Երգեցողութեան ժամին երկիւղած,
Լսում էր յաճախ նա ծանօթ խօսքեր։
Մերթ ուրուագիծը մի ծանօթ դէմքի
Մռայլ տաճարի կամարի ներքև
Սահում էր անհետք, առանց չչուկի.
Եւ բուրվառների ծուխի մէջ թեթև

Ցոլում որպէս աստղ հանդարտ ու մաքուր,
Հրապուրում էր նա, կոչում էր... բայց ո՞ւր...

III

Թագնուած միջևն երկու բլուրի՝
Կանգնած էր վանքը ձորակի մէջ զով։
Եւ ամեն կողմից բարդու, չինարի
Շրջապատուած էր բարձրը շարքերով.
Եւ երբ ձորն ամբողջ պատում էր գիշեր,
Թափանցում էին ծառերի միջից
Նորընծայ կոյսի կանթեղի շողեր
Խուցի երկարուկ պատուհաններից։
Շուրջը, շուքի մէջ նշենիների,
Ուր շարուած էին խաչեր տխրագին,
Լուռ պահակները գերեզմանների,—
Խումբ, խումբ թռչուններ ձայնակցում էին.
Աղմկում էին, քարից քար ցատկում
Լեռնաղբիւրների ծուփեր զովարար,
Եւ ձորում, առկախ ժայռի ներքևում
Գրկախառնուելով բարեկամաբար,
Թուփերի միջով հոսում են 'ի բաց.
Ծաղկանց եղեամով թուփերը ծածկած։

IV

Երևում էին հիւսիսում լեռներ։
Վաղորդեան լոյսի ծագման ժամանակ,

Երբ որ սահում է ձորից դէպի վեր
Կապտաժեռ ծուխը օղակ և օղակ,
Եւ մուազզինը, դէպ հարաւ դարձած *),
Կարդում է կանուխ հրաւէր աղօթքի,
Եւ զարթեցնում է վանքը քընացած
Դողդոջ և հնչուն ձայնը զանգակի,
Այդ խորհրդաւոր ժամին անդորրիկ.
Երբ երկար կուժը դրրած իր ուսին՝
Ժայռաժուտ լեռան լանջից ուղղաձիգ
Իջնում է ջրի մատղաշ վրացուհին,—
Գծագրրում էր ձիւնապատ շղթան
Պարսպի նման մանիշակագոյն
Պարզ երկնի վերայ. իսկ երեկոյեան
Ըզգենում էր նա շղարշ շառագոյն։
Եւ այնտեղ, վեր քան լեռները բոլոր,
Ամպերը ճեղքած՝ բարձրանում էր վէս
Կազբէկ, Կովկասի արքան մեծազօր,
Ճակատին չալմա, թիկունքին բեհեզ։

---

*) Այստեղ ես ինձ թոյլ եմ տուել շեղուել բնագրից։ Հեղինակը, երևի մօտից տեղեակ չը լինելով մահմեդականների սովորութեանը, մի փոքրիկ սխալ է գործել ասելով, որ մուազզինը դէպ արևելք դարձած՝ աղօթքի է հրաւիրում մարդկանց, այն ինչ մուազզինը և բոլոր մահմեդականները՝ աղօթելիս դառնում են դէպի Մէքքա, որ Կովկասի համար հարաւ է և ոչ արևելք։

Ե. Թ.

V

Բայց չ'էր մաչելի անմեղ բերկրութեան
Թամարի սիրտը, լի չար իղձերով,
Եւ նորա համար աշխարհքը համայն
Շրջապատուած էր մռայլ ստուերով.
Եւ ամեն մի բան, որ աշխարհքում կար,
Տանջանքի միայն պատճառ էր նորան,
Թէ դիշերային քընաբերը խաւար,
Թէ ուրախառիթ չողը վաղորդեան։
Եւ մերթ հաղիւ որ դիշերը թմրած
Զովարար մութով պատում էր երկրին,
Նա, աստուածային պատկերի դիմաց
Խելագարի պէս ընկնում էր գետին,
Եւ արտասուում էր. և լռութեան մէջ
Ձայնը նորա ծանր հեկեկանքների
Խռովեցնում էր ուշքն ուղղորի,
Որ խորհում էր, թէ՝ «այրումը փակուած
Ողբում է ահա քաջքը լեռնային»,
Եւ իւր նրբալուր ականջը լարած՝
Թշում էր ահով յոգնատանջ իւր ձին...

VI

Պատուհանի մօտ Թամարը յաճախ
Նստած է վչտով, սարսուռով լեցուն,
Միակ խորհուրդով անդուլ մտազբաղ

Լարուած աչքերով նայում է հեռուն,
Եւ ամբողջ օրը հառաչում է նա
Ու սպասում մէկին... Եւ ինչ որ մի ձայն
Մեղմ չընչում է նորան՝ «նա կը դայ»։
Զուր չ'էին չոյում երազներ նորան,
Զուր չ'էր երևում նորան այցելուն,
Խօսքերով քնքոյշ և կախարդական,
Աչքերով այնպէս տխրութեամբ լեցուն։
Տանջւում է արդէն վաղուց իւր սրտում,—
Թէ ինչ պատճառով յայտնի չէ իրան.
Մինչ սուրբերին է աղօթել ուզում,
Սիրտը աղօթքով դառնում է նորան.
Եթէ անկողնին յենւում է տխուր,
Ուժասպառ եղած կռուիցն անդադրում,—
Այրում է նորան բարձը որպէս հուր,
Սարսափում է նա, չնչասպառ լինում,
Եւ պառկած տեղից ցատկում է նա վեր,
Անցնում է ամբողջ մարմնով դողդոջիւն,
Ցնցւում է կուրծքը, վառւում են ուսեր.
Նա չունչ առնելու չունի զօրութիւն.
Աչքերին թանձր մշուշ է պատում,
Փնտռում են անյագ կռնները նորա
Ուրիշ կռների դդուանքն ու սեղմում.
Համբոյրն հալւում է չրթունքի վերայ...

. . . . . .

. . . . . .

VII

Վրաստանի լեռներ արդէն ծածկուած են
Իրիկուան մութի քօղով օդեղէն։
Հնազանդ սիրելի իւր սովորութեան,
Սլացաւ Դևը դէպի մենաստան.
Բայց պղծել խաղաղ վայրը սրբանուէր
Նա չ'էր յաղթնում երկար ժամանակ,
Եւ եղաւ բոպէ, երբ պատրաստ լինէր
Կարծես թողնելու իւր չար նպատակ։
Բարձրը պատերի ետև մտազբաղ
Թափառում էր նա,—չ'էր փչում քամին,
Բայց նորա քայլից մութի մէջ խաղաղ
Տերևներ ամեն դողդողում էին։
Նայեց նա վերև. կանթեղի լոյսը
Փայլեցընում էր խուցի պատուհան.
Վաղուց մէկ հոգու սպասում էր կոյսը։
Եւ ահա միջից հանուր լռութեան
Դողաց չոնգուրի ձայնը ներդաշնակ
Եւ հնչեց մի երգ. և այդ հնչիւններ
Իրար ետևից չափով զուգանուադ
Հեղուում, հեղուում են ինչպէս արցունքներ.
Եւ երգն անոյշ է. կարծես յօրինուած
Լինէր երկնքում, և բերուած աշխարհ։
Հրեշտակ չէ արդեօք դա, որ մուտացուած
Իւր բարեկամին տեսնելու համար՝
Թռել է թաքուն խուցը այդ վանքի,

Եւ երգում նորան անցեալի մասին,
Որպէս զի նորա տանջանքն ամոքի...
Առաջին անգամ Դևը հասկացաւ
Սիրոյ թախիծը և նորա յուզում...
Ահաբեկ եղած՝ փախչել ցանկացաւ,
Բայց թևը չարժել չ'էր կարողանում։
Եւ, ով հրաշք, նորա մթագնած աչքից
Ծանրը մի կաթիլ թաւալւում է ցած...
Եւ մինչև այսօր խուցին մերձակից
Կը տեսնես մի քար այրուած, թափանցուած
Մի չեթով՝ կիզիչ, որպէս բոցային,
Արցունքի չեթով, որ չէ մարդկային։

VIII

Եւ մտնում է ներս, սիրելու պատրաստ,
Բարութեան առաջ հոգին գրկաբաց,
Խորհելով, թէ նոր կեանքի բարեբաստ
Հասել է բոպէն նորա ցանկացած։
Ըսպասողութեան երկիւղն անմեկին,
Անորոշ վախը համր անյայտութեան,
Որպէս թէ սկզբի տեսութեան ժամին,
Մեծամիտ ոգուն ըզգալի դարձան.
Դա գուշակութիւն չ'էր բարենշան...
Նա ներս է մտնում, նայում, իւր դիմաց
Ահա քերովբէն—առաքեալն երկնի,
Պաշտպանը չքնաղ մեղանչականի,

Ճառագայթասփիւռ ճակատով կանգնած՝
Ոսոխից, պայծառ ժպիտն երեսին,
Պատսպարել է թեռվը կոյսին...
Եւ աստուածային չողիցը յստակ
Շլացաւ յանկարծ հայեացքն անմաքուր,
Այն ինչ սիրալիր բարեւի տեղակ
Ցանդիմանութիւն հնչեց խստալուր։

IX

«Ոգի՛ անհանգիստ, ոգի՛ յանցաւոր,
Ո՞վ հրաւիրեց քեզ այս կէս գիշերին։
Զարութիւնն այստեղ չէ մտել ց'այսօր.
Աստեղ պաշտելի դու չ'ես ոչ ոքին։
Մի՛ հարթիր շաւիղ ամբարշտութեան
Դէպի իմ սէրը և իմ սրբութիւն։
Ո՞վ հրաւիրեց քեզ»։ Իբրև պատասխան
Ծիծաղեց ոգին նենգութեամբ լեցուն.
Շառագունուեցաւ հայեացքը խանդից,
Եւ հոգու խորքում զարթեց վերստին
Հին ատելութեան ոխը թունալից։
«Դա իմն է, գոռաց Դևն ահեղագին,
Թող տուր, դա իմն է, իմը յետ այսու։
Ուշ յայտնուեցար դու, ո՛վ պահապան,
Եւ դրան, որպէս ինձ, դատաւոր չես դու։
Դրոշմել եմ արդէն ես իմ կընիքը

Դորա սրտի վրայ ամբարիշտ ու վէս.
Այստեղ՝ էլ չը կայ քո սրբութիւնը.
Այստեղ իշխում եմ և սիրում եմ ես»։
Եւ սուրբ հրեշտակը խեղճ զոհի վերայ
Զգեց մի հայեացք աչքերով տրտում,
Ապա թափ տալով թեները ոսկեայ՝
Ընկրկեց հանդարտ երկնի եթերում։

X

Թ ա մ ա ր

Ո՜հ, ո՞վ ես։ Խօսքերդ սարսափելի են.
Ո՞վ ուղարկեց քեզ՝ Դրժոխքը թէ Դրախտ։
Ի՞նչ ես կամենում։

Դ ե ւ

Դու գեղեցիկ ես։

Թ ա մ ա ր

Բայց ո՞վ ես դու, ո՞վ... Պատասխան տուր ինձ։

Դ ե ւ

Ես նա եմ, որին լսում էիր դու
Կէսգիշերային լռութեան պահուն,
Որի վիշտն աղօտ կերպով հասկացար,

Որի չչնջաց միտքը քո հոգուն,
Որի պատկերը երազում տեսար.
Նա, որի հայեացքն յոյս է խորտակում,
Երբ որ այդ յոյսը ծաղկում է դեռ նոր.
Ես նա եմ, որին ոչ ոք չէ սիրում
Եւ անիծում է ամեն չնչաւոր։
Ոչինչ բան է ինձ ժամանակն անհուն,
Ոչինչ ինձ համար և՛ տարածութիւն.
Ոսոխն եմ երկնի, չարիքը բնութեան,
Իմ ստրուկներին ահաւոր աստուած,
Արքան գիտութեան և ազատութեան,
Եւ տես ինձ ահա ոտքերըդ ընկած։
Ես քեզ ողեզմայլ բերում եմ նուէր
Սիրոյ աղերսանքն, աղօթքն անդորրիկ,
Իմ արտասուքի առաջին շիթեր
Եւ իմ երկրային թախիծն անդրանիկ։
Ո՜հ, ականջ դիր ինձ և 'ի գութ շարժուիր.
Դու միակ խօսքով ինձ կարող էիր
Դարձնել դէպ երկինք և դէպի բարին.
Որպէս սուրբ քաղով, քո սիրով պատած
Կը մօտենայի Աստուծոյ դահին,
Որպէս նոր հրեշտակ նոր փայլ ըզգեցած։
Ո՜հ, լսիր միայն, լսիր, խնդրում եմ։
Ես ըստրուկն եմ քո, ես քեզ սիրում եմ։
Քեզ տեսայ թէ չէ—սրտիս մէջ թաքուն
Ատեցի իմ ոյժն ու անմահութիւն,
Եւ նախանձեցի ես այս աշխարհի

Երջանկութեանը վաղանց ու թերի.
Աղէտ թուաց ինձ չ'ապրել ինչպէս դու,
Սոսկալի՝ ապրել քեզանից հեռու։
Անարիւն սրտիս չող անակնկալ
Նորից ջերմութիւն բաշխեց կենսունակ,
Եւ գալարուեցաւ թախիծը դարձեալ
Մի օձի նման իմ հին վէրքի տակ։
Ի՞նչ է առանց քեզ իմ անմահութիւն,
Ի՞նչ է պետութիւնս անեզր, անվախճան,
Սոսկ հնչուն մի բառ, սոսկ ամայութիւն,
Վիթխարի տաճար առանց սրբութեան։

Թ ա մ ա ր

Թող տուր ինձ, լսիր, ոգի՛ դու խարդախ,
Չ'եմ հաւատում քեզ, ոսոխ մարդատեաց։
Տէր իմ Արարիչ... աղօթել, աւա՜ղ,
Չ'եմ կարողանում... միտքս թուլացած
Վարակուած է ողջ թոյնով մահարար։
Լսիր, կորըստեան դու ինձ կը մատնես.
Խօսքերըդ թոյն են և հուր ինձ համար...
Ասա, ինձ ինչո՞ւ արդեօք սիրում ես։

Դ ե ւ

Ինչո՞ւ, նազելիս։ Աւա՜ղ, չը գիտեմ։
Նոր կեանքով լցուած՝ գլխիցս յանցապարտ
Փչեցէն պսակը վայր առայ հպարտ.

Աչքիդ մէջ գտայ դժոխքս ու եդեմ
Եւ անցեալս ամբողջ ոտնակոխ արի։
Սիրում եմ կրքով քեզ ոչ այս երկրի,
Ինչպէս դու սիրել չ'ես կարող բընաւ,
Իմ անմահ մաքի և ցընորքների
Ամբողջ ըզմայլմամբ, զօրութեամբն անբաւ։
Հոգիս, աշխարհի սկզբից 'ի վեր,
Կբրում էր իւր մէջ գլուխը քո դէմքի,
Միշտ աչքիս առաջ նա սաւառնում էր
Ամայութեան մէջ անծիր եթերքի։
Վաղուց ականջիս անուն ընդ քաղցրիկ
Հնչում էր, յուզում միտքս անդադար.
Դրախտի մէջ երբ ես էի երջանիկ,
Դու էիր միայն պակաս ինձ համար։
Ո՜հ, թէ հասկանալ քեզ հընար լինէր,
Թէ ինչքան մեծ է և դառը մի վիշտ՝
Դարաւոր կեանքում մենակ, անընկեր,
Թէ զուարճանալ, թէ տանջուիլ ընդ միշտ,
Զարութեան համար զովեստ չը ստանալ
Եւ չ'ակնկալել վարձքը բարութեան,
Իւր համար ապրել, իրենից ձանձրանալ,
Ձանձրանալ կռուիցն այդ յաւերժական՝
Առանց յաղթութեան, առանց հաշտութեան.
Շարունակ ցաւել, երբէք չը ցանկալ,
Ամեն բան տեսնել, գիտենալ, զգալ,
Ամեն, ամեն բան ատել աշխատել
Եւ ինչ կայ, չը կայ՝ միշտ արհամարհել...

Այն օրից և ետ, երբ աստուածային
Նզովքն ահաւոր հասաւ 'ի կատար,
Բընութեան նախնի կուրծքը ջերմագին
Մի անդամ ընդ միշտ սառեց ինձ համար...
Սփռուած էր արդ աչքիս առաջին
Լայն տարածութեան կապոյտը անհուն,
Ես տեսնում էի լուսաւորներին՝
Հարսնիքի չքեղ փառքով զարդարուն.
Եւ անցնում էին—ծանօթներն իմ հին—
Ոսկեայ պսակներ իրենց ճակատին.
Բայց ինչ—և ոչ իսկ մէկը նորանցից
Իւր եղբայրակցին ճանաչեց նորից։
Ինձ վիճակակից աքսորեալներին,
Վհատութեան մէջ, ես արդ կոչեցի,
Բայց նոցա խօսուածք, դէմքը ոխագին
Ես ինքս, աւա՜ղ, չը ճանաչեցի։
Բաղխելով թեերս, ահարեկ եղած՝
Տարածութեան մէջ սրլացայ 'ի բաց...
Բայց ո՞ւր և ինչո՞ւ, ինքս չը գիտեմ։
Հին ընկերներից մերժուեցայ խսպառ.
Տիեզերքն ամբողջ, որպէս և եդեմ,
Ցանկարծ խուլ ու մունջ դարձաւ ինձ համար։
Այդպէս, թողուելով հոսանքի քմաց,
Զուրկ առագաստից և առանց ղեկի,
Լողում է մոլար մակոյկը բեկուած
Առանց առաջնորդ կէտ նպատակի.
Այդպէս վաղորդեան՝ մի սև թուխսլ ահեղ

Զը յանդգնելով կանգ առնել մի տեղ,
Կապոյտ բարձունքում յածում է մենակ,
Մէջը լիք-լեցուն որոտում և հուր,
Թռչում է անհետք և աննպատակ,
Եւ, Աստուած գիտէ, որտեղից և ուր...
Մարդկանց մեղանչել երկար չ'ուսուցի,
Երկար ես նոցա չ'եղայ դեկավար,
Ամեն ազնիւ բան վատաբանեցի
Եւ պախարակեցի բարին՝ ոչ երկար...
Նոցա մէջ ընդ միշտ հանգցրի դիւրին
Հաւատքի բոցը աստուածանուէր...
Եւ իմ նեղութեան միթէ արժէին
Միայն յիմարներն ու կեղծաւորներ։
Եւ քաշուեցայ ես ձորերը լեռան,
Ցածեցի որպէս մէտէօր չրջիկ
Ի մէջ գիշերուայ խորին մթութեան...
Եւ սրլանում էր համբորդը մենիկ
Խարուած ճրագի լոյսից մերձակայ,
Եւ ձիով անդունդն ընկնում գլխիկոր,
Եւ 'ի զուր կոչում—և ժայռի վերայ
Արիւնի հետքը ձգում էր ոլոր...
Բայց այդ խաղերը մռայլ չարութեան
Երկար ինձ համար չ'եղան դուրեկան։
Կռուելով ընդդէմ հգօր մրրիկին
Եւ գետնի փոշին հանելով վերև՝
Մէգ ու չանթ հագած և որոտագին
Սրլանում էի ամպերը մինչև.

Որպէս զի խեղդեմ իմ ցաւն ու կսկիծ
Ամբոստ տարերքի կռւում զայրագին,
Անխուսափելի ազատուեմ մտքից
Եւ մոռացման տամ անմոռանալին։
Ի՞նչ են էջերը մարդկանց վէտերի,
Ի՞նչ են զրկանքներն, աղէտներ ծանօթ
Անցեալ և գալիք ողջ սերունդների
Իմ անյայտ ցաւիս մէկ բոպէի մօտ։
Եւ ինչ են մարդիկ։ Ի՞նչ կեանքը նոցա։
Ի՞նչ են հոգսերը նոցա աննշան։
Նոքա անցել են, և կ'անցնեն նոքա։
Ցոյս կայ. կը լինի արդար դատաստան,
Որ, թէև մարդուն դատապարտի էլ,
Կարող է ներել, թողութիւն չնորհել։
Բայց միշտ իմ մէջ է իմ կսկիծն անչէջ,
Իմ ցաւիս չը կայ, ինչպէս ինձ, վախճան,
Եւ ոչ նինջ կայ նրան գերեզմանի մէջ։
Գալարւում է նա մերթ օձի նման,
Մերթ կիզում որպէս հընոց բոցավառ
Եւ մերթ ճնշում է միտքս որպէս քար,
Որպէս անսասան չիրիմ վիթխարի
Մեռած յոյսերի ու զգացումների։

Թամար

Ով որ ես, ընկերդ իմ պատահական,
Հանգիստս ընդ միշտ տալով կորստեան,
Գաղտնի բերկրանքով, կամքիս հակառակ,

Լսում եմ ես քեզ, տառապող էակ,
Բայց թէ խօսքիդ մէջ լինի նենգութիւն.
Բայց թէ դու լարած լինիս դու թաքուն...
Ո՜հ, խնայիր ինձ... Ի՞նչ պարծանք չնչին...
Արդեօք քեզ ինչի՞ պէտք է իմ հոգին:
Մինթէ երկնքին թանկ եմ առաւել,
Քան նոքա, որոնց դու չ'ես նկատել:
Նոքա ևս, աւա՜ղ, են գեղեցկատես,
Նոցա կուսական մահիճը նոյնպէս
Ց'արդ չէ շօշափուած ձեռքով առնական...
Ո՜հ, տուր ինձ երդում ճակատագրական...
Ասա՛,—տեսնում ես սրտիս տառապանք,
Տեսնում կանացի իղձերս ու տենչանք:
Կամայ ակամայ հոգիս դողահար
Լցւում է ահով, որ քաղցր է սակայն...
Բայց դու ամեն ինչ արդէն հասկացար,
Դու իմանում ես արդէն ամեն բան,
Եւ, անտարակոյս, կը խղճաս ինձ դու:
Երդուիր ինձ հիմա, ուխտիր յետ այսու
Քո չար արուեստը թողնել յաւիտեան:
Մինթէ երդումներ, մինթէ խոստումներ
Անբեկանելի այլ կրս չը կան...

Դ ի ւ

Երդւում եմ ստեղծման առաջին օրով,
Երդւում եմ վերջին օրովը նորա,
Երդւում եմ անկման դառը խայթերով.

Նաև յաղթութեան ցնորքով կարճօրեայ.
Երդւում եմ մեղքի անարդ պարտութեամբ
Եւ յաղթանակով սուրբ ճշմարտութեան,
Երդւում եմ քեզ հետ քաղցրը տեսութեամբ
Եւ ըստառնացող ժամով անջատման.
Երդւում եմ զօրքով քաջ ոգիների,
Եղբարց վիճակով ինձ ըստորադաս,
Սրերովն անկիրք քերովբէների,
—Իմ ոսոխների աննինջ հանապազ,—
Երդւում եմ երկնով, երդւում դըժոխքով,
Քեզնով և ամեն սրբութեամբ երկրի.
Երդւում եմ աչքիդ վերջին հայեացքով,
Առաջին շիթով քո արցունքների,
Անչար շրթունքիդ արտաշնչութեամբ,
Մետաքս գանգուրիդ շարք, շարք ծուփերով,
Երդւում եմ վշտով և երջանկութեամբ,
Երդւում եմ, Թամար, երդւում իմ սէրով,—
Հրաժարւում եմ ես գոռող մտքերից,
Հրաժարւում եմ իմ ոխից նախկին,
Այսուհետև նենգ միտքս թունալից
Չի մոլորեցնի ոչ ոքի հոգին.
Փափագում եմ ես հաւատալ բարւոյն,
Ուզում եմ սիրել, աղօթել նորից
Եւ երկնքի հետ կնքել հաշտութիւն:
Զղջման արցունքով ես իմ երեսից
Կը ջնջեմ հետքերն երկնային հուրի,
Որ իմ պատկերը դառնայ քեզ արժան.

Եւ թող, առանց ինձ, մարդկութիւն երկրի
Անգիտութեան մէջ ծաղկի յաւիտեան։
Ո՜հ, հաւատա՛ ինձ, ց'արդ ես միայնակ
Հասկացել եմ քեզ և գընահատել։
Ընտրել եմ քեզ ինձ սրբութիւն միակ,
Իշխանութիւնը ոտքիդ տակ դրել։
Տենչում եմ սիրոյդ որպէս բարիքի,
Եւ ակնթարթին՝ դարեր քեզ կը տամ.
Սիրոյ մէջ, Թամար, որպէս չարիքի,
Մեծ եմ, հաւատա՛, և հասատակամ։
Կ'առնեմ, եթերքի ես ազատ որդին,
Քեզ գերասեղեայ աշխարհն անսահման,
Եւ տիեզերքի կ'ընես թագուհին,
Իմ ընկերուհին յաւիտենական.
Առանց խղճալու և կարեկցութեան
Կը նայես երկրին քո ոտքի ներքև,
Ուր երջանկութիւն չը կայ իսկական,
Ուր գեղեցկութիւն չը կայ յարատև,
Ուր փոքրիկ կրքեր միայն անուում են,
Ուր մեղք և պատիժ լոկ ունին տեղի,
Եւ ուր չէ կարող մարդը հոգեղէն
Սիրել կամ առել առանց երկիւղի։
Միթէ չը գիտես, թէ ինչ է արդեօք
Մարդկային ազգի սէրը անկայուն,—
Մառաղ արիւնի մի վաղանց բորբոք։
Անցնում են օրեր, պաղում է արիւն։
Ո՞վ է դիմանում արդեօք անջատման,

Նոր գեղեցկութեան հրապոյրի դիմաց,
Զանձրոյթի առաջ և յոգնածութեան
Կամ ցընորքների ինքնահաճ քըմաց։
Ո՛չ, չէ քեզ համար, էակ գեղեցիկ,
Գիտցի՛ր, վիճակը ճակատագրական՝
Անձուկ չը ջանում թառամել լուիկ,
Իբրև մի ստրուկ խանդոտ կոպտութեան,
Ապրել փոքրոգի, պաղ և կեղծասուն
Ընկերների մէջ և ոսոխների.
Ապրել վախի մէջ, յոյսի ապարդիւն
Եւ ծանր ու ամուլ աշխատանքների։
Անկիրք և տխուր չը պիտի խամրես
Փակուած պատերով այս բարձրակառոյց,
Աղօթքների մէջ, հաւասարապէս
Հեռու երկնքից և հեռու մարդուց։
Ո՜հ, ոչ իմ քաղցրիկ, գեղանի ընկեր,
Վիճակուած է քեզ ուրիշ մի վախճան,
Ըսպասում է քեզ տառապանք տարբեր,
Վայելքը մի այլ խորին բերկրութեան։
Թօթափիր քեզնից իդեերդ նախկին,
Զգի՛ր իւր բախտին աշխարհը թշուառ,
Եւ վեհ գիտութեան անդունդը խորին
Ես 'ի փոխարէն բանամ քեզ համար։
Ինձ ըսպասարկու ողջ ոգիներին
Ես կ'առաջնորդեմ դէպի քո ոտքեր,
Նաժիշտներ թեթև և գերմարդկային
Քեզ կը պարգևեմ, ով գեղեցկահեր։

Ճակատիդ համար պսակը ոսկեայ
Կը խլեմ ասողից ես արևելեան,
Կ'առնեմ ծաղկունքից շաղը գիշերուայ
Եւ այդ դոհարով կը ցօղեմ նորան.
Ես վերջալոյսի բոցագոյն շողից
Նաղելի մէջքիդ կը հիւսեմ գօտի
Եւ կը համակեմ հոտով բուրալից
Ամեն մի շունչը քեզ պատող օդի։
Նուագածութեամբ քաղցը ու դիւթալից
Կը շոյեմ յաւերժ ես քո լսելիք.
Կը հրաշակերտեմ սաթ ու փիրուզից
Պալատներ շքեղ և չընաչխարհիկ.
Ես կ'ինջնեմ ծովի անդունդը մինչև,
Ես կը սլանամ ամպերից վերև,
Ես քեզ կ'ընծայեմ ամեն, ամեն բան,
Սիրիր ինձ միայն...

XI

Եւ թեթեակի շրթունքը կիզիչ
Հպեց դողդոջուն կոյսի շրթունքին,
Պատասխանելով նորա աղերսին
Անոյշ խօսքերով, թովիչ, հրապուրիչ։
Հզօր հայեացքը աչքերին յառած՝
Այրում էր նորան. և կոյսի գիմաց,
Մութի մէջ, ուղիղ փայլատակում էր
Անդիմադրելի որպէս մի սուսեր։
Ցաղթանակում էր չար ոգին, աւաղ։

Նորա համբոյրի թոյնը մահալից
Թափանցեց կոյսի կուրծքի մէջ մատաղ...
Մի ճիչ սոսկալի և տառապալից
Վրդովեց նիրհը կէս գիշերային...
Եւ այդ ձայնի մէջ կար ամենայն բան՝
Սէր, վիշտ, նախատինք, պաղատանք վերջին,
Լի վհատութեամբ հրաժեշտ վերջնական,
Վերջնական հրաժեշտ դեռատես կեանքին։

. . . . . .

XII

Գործելով պատոյն իւր սովորական
Բարձրը պատերի շուրջը, միայնակ,
Գիշերուայ պահակն այդ ժամին, անձայն,
Քայլում էր, ձեռքին թուջեայ մի կոչնակ։
Եւ մատաղ կոյսի խուցին մօտեցած,
Զափածոյ քայլը կարճելով կամաց,
Այլայլուած հոգով կասեցրեց նա
Ձեռքը, բարձրացած կոչնակի վերայ։
Թուաց ականջին ծեր պահապանի,
Կարծես լսում էր լռութեան մէջից
Ներդաշնակ համբոյր երկու բերանի,
Մեղմիկ հառաչանք և վաղանց մի ճիչ...
Եւ ահա նորա գլխում ալեզարդ
Զարթեց մի կասկած ամբարշտական,
Սակայն սլացաւ մի ևս ակնթարթ,
Եւ մենաստանում լռեց ամեն բան.

Եւ տերևների միայն տրտունջը
Բերում էր հեռուից մեղմաշունչ քամին.
Եւ լեռան գետի թմրած մրմունջը
Պատմում էր ինչ որ իւր մութ ափերին։
Կարդում է շտապով և երկիւղալից
Ծերուկն աղօթքը փարատիչ, ազդու,
Որ մեղանչական վանէ իւր մտքից
Թելադրութիւնը չարանենգ ոգու.
Խաչակնքում է դողդոջ մատերով
Իւր ցընորայոյզ կուրծքը զառամեալ,
Եւ նորից լռիկ, արագ քայլերով
Շարունակում է ուղին որոշեալ...

. . . . . .

XIII

Որպէս մի քընած փէրի գեղունակ
Դագաղի միջին պառկած էր Թամար,
Եւ քան սաւանը մաքուր էր, ճերմակ
Նորա ճակատի գոյնը դալկահար։
Արտեանունքը փակուած յաւիտեան...
Բայց ո՞վ, ո՞ երկինք, չ'էր ասի արդեօք,
Թէ նոցա ներքև նիրհում էր միայն
Հայեացքն հրաշալի ու սպասում էր լոկ
Կամ արշալոյսին և կամ համբոյրի։
Բայց զուր էր սահում նոցա վերայից
Ոսկեզօծ շերտը լուսոյ շողերի,
Զուր էին նորանց լուռ ու վշտալից

Համբուրում շրթունքն ազգականների։
Ո՛չ, խախտելու ոյժ չ'ունի ոչ մի բան
Մահուան կընիքը յաւիտենական։
Եւ այն էակը, որի մէջ նախկին
Վառվռուն կեանքի ոյժը խօսում էր
Այնպէս պարզ կերպով ըզգացմունքներին,
Այժըմ փոշի է անբան ու չնչին.
Հազիւ ցոլալով՝ շրթունքի վերայ
Պաղել է ժպիտ ոչ սովորական,
Սակայն տրտմալից իմաստը նորա
Մթին է որպէս ինքը գերեզման։
Ի՞նչ կայ նորա մէջ։ Ծաղր՝ ճակատագրին,
Անփարատելի արդեօք կասկածանք,
Ըմբոստ թշնամանք կայ դէպի երկին,
Թէ դէպի կեանքը պաղ արհամարհանք։
Ի՞նչպէս իմանալ։ Աշխարհի համար
Կորած է ընդ միշտ իմաստը նորա.
Որպէս տապանի գերութեան նկար
Գրաւում է իրան հայեացքն ակամայ,
Ուր օտարոտի ամեն տառի տակ
Գուցէ թագնուած լինի յաւիտեան
Պատմութեան էջը հին տարիների՝
Նշան մեղապատ խոր իմաստութեան,
Մոռացուած հեռքը մտածումների։
Եւ երկար խղճուկ զոհին փառութեան
Ձեռք չ'էր դիպցնում հրեշտակը եղծման։
Եւ գեղեցիկ էր նորա դիմագիծ,

Զերթ անարտայայտ արձան մարմարեայ,
Զուրկ ամեն մաքից, զուրկ զգացմունքից,
Եւ խորհրդաւոր՝ ինչպէս ինքը մահ։
Ծնծուղեան օրում և ոչ միանգամ
Չ'էր եղել տօնի զգեստը Թամարի
Այնպէս գունագեղ և այնքան փարթամ։
Ծաղկունքը նորա բընիկ ձորերի
(Այդ էր պահանջում հնաւանդ մի ծէս)
Նորան բուրմունքով ողողում էին,
Եւ, սեղմուած անկեանք ձեռքի մէջ, կարծես,
Տալիս մայր հողին հրաժեշտը վերջին։

XIV

Տխուր ազգատոհմն ու դրացիք ամեն
Խմբով մեկնելու պատրաստ են արդէն։
Փեսելով դանդուր մազերն ալեոր,
Ծեծելով անձայն կուրծքը զառամեալ,
Նստում է իւր ձին ճերմակ բաշաւոր
Վերջին անգամը ծերունի Գուդալ։
Եւ գնացքը շարժուեց։—Կը տեսի ճամբան
Ամբողջ երեք օր և երեք գիշեր։
Փորուած է կոյսին այնտեղ գերեզման,
Ուր թաղուած էին իւր նախահայրեր։
Մէկը Գուդալի պապերից նախնի,
Կողոպտիչ գիւղի և անցորդ մարդու,
Երբ հիւանդութեամբ դամուեց անկողնի,

Ու հասաւ բոլէն ապաշխարելու,
Քաւելու համար մեղքերը նախկին՝
Կանգնել խոստացաւ մատուռ քարաշէն
Գրանիտ ժայռերի հսկայ բարձունքին,
Ուր բուքն ու հողմեր միայն երգում են
Եւ ուր թռչում է միմիայն բազէն.
Եւ Կազբէկ լեռան ձիւների մէջտեղ
Բարձրացաւ չուտով մենիկ մի տաճար,
Եւ չարսիրտ մարդու ոսկերքը այնտեղ
Վերատին առան հանդիսաւոր ու դաղար։
Եւ ժայռն, հարազատ ննջարան մեզի,
Դարձաւ, չատ չ'անցած, մի հանգստարան.
Կարծես աւելի մօտիկ երկնքի
Տաք սիրտ լինէր տունն անդրմահուան,
Կարծես, ոչ մի բան, մարդկանցից հեռու,
Չ'էր նոցա վերջին քունը խանգարի...
Ի զուր. մեռելին երազ չի գալու
Ոչ վիշտ, ոչ բերկրանքն անցեալ օրերի։

XV

Տարածութեան մէջ կապոյտ եթերի,
Քերուբէներից մէկը լուսաւոր
Թռչում էր փայլով ոսկեայ թեերի
Եւ գրկած տանում ոգի մեղաւոր։
Եւ սփոփանքով քաղցր ու յուսալից
Նորա կասկածը նա փարատում էր,

Եւ արտասուքով՝ նորա երեսից
Ջնջում էր վշտի և մեղքի հետքեր։
Արդէն հեռաւոր ձայներ դրախտային
Հասնում էին նոցա ականջին թեթև—
Երբ յանկարծ ազատ կտրելով ուղին
Դևը անդունդից սլացաւ վերև...
Բոցափայլ էր նա կայծակի նման,
Հոգոր էր որպէս մրրիկ կատաղած,
Եւ, յանդգնութեամբն իւր ամբարտաւան,
Խելագարի պէս «Դա իմն է» գոռաց։
Աղօթքով ահը վանելով սրտից,
Ամուր՝ հրեշտակի կուրծքին պահապան
Կպաւ Թամարի հոգին մեղսալից։
Վճռւում էր արդ նորա ապագան.
Դարձեալ նորա դէմ Դևը կանգնած էր։
Բայց նորան, երկինք, ո՞վ կը ճանաչէր։
Ինչպէս նայում էր աչքով չարաչող,
Ինչպէս նա լի էր թոյնով մահաբեր
Եւ առելութեամբ վախճան չ'ունեցող,
Եւ ինչ սառնութիւն գերեզմանական
Փչում էր նորա պատկերից դաժան։
«Կորիր, կասկածի ոգի՛ դու խաւար»,
Պատասխան տուաւ նորան քերովբէն,
«Հերիք է որքան յաղթանակ տարար,
Արդ դատաստանի հասել է բոլոր,
Եւ կամքն Աստուծոյ սուրբ է ու բարի.
Փորձութեան օրերն անցել են անհետ.

Ընկաւ սորանից կապանքը չարի
Մարմնի հողանիւթ փուչ կեղևի հետ։
Ըսպասում էինք վաղուց մենք սորան։
Այնպիսիներից է սորա հոգին,
Որոնց ողջ կեանքն է ակնթարթ միայն
Անհասանելի բերկրութիւնների
Եւ անտանելի տառապանքների։
Հիւսել է ազնիւ եթերից Աստուած
Սոցա մէջ կեանքի իւրաքանչիւր լար.
Չէ սոցա համար աշխարհը ստեղծուած
Եւ ոչ էլ սոքա աշխարհի համար։
Իւր կասկածանքը և իւր յանցանքներ
Սա սարսափելի արժէքով քաւեց...
Սա սիրեց անկեղծ, կրեց տանջանքներ,
Եւ սիրոյ առաջ եդեմը բացուեց»։
Եւ սուրբը հրեշտակը ասաստող աչքերով
Բանսարկուի վրայ նայեց խստագին,
Եւ ուրախ, ուրախ թեւահարելով՝
Բարձրացաւ դէպի լոյսը երկնային։
Եւ յաղթուած Դևը սրտով մաղձալից
Նզովեց բոլոր իւր խենթ ցընորքներ,
Եւ ամբարտաւան՝ մընաց նա նորից
Տիեզերքի մէջ մենակ, անընկեր,
Ինչպէս էր առաջ անյոյս և անսէր։

Կոյշաուր կոչուած հովի վերևում,
Զառ 'ի վեր լանջին ժայռակոյտ լեռան,
Ց'այսօր կանգնած են, ց'այսօր տեսնւում
Հին աւերակներ ժանիքանման։
Եւ պատմութիւններ կան նոցա մասին,
Որ ահ են ազդում երեխաներին...
Որպէս ուրուական, յուշարձան լռին,
Վկայ օրերի այն կախարդական,
Ծառերի միջով տալիս է սևին։
Ցածում փռուած է գիւղը ցիրուցան,
Ծաղկում է երկիրն ու գալարանում,
Ցնդւում է բնութեան ձայնն աննկարագնակ,
Եւ կարաւաններ գալիս են գընում,
Հնչեցնում հեռուից բոժոժ ու զանգակ։
Եւ մէգի միջով թափւում է վերից
Գահավէժ, փայլուն գետը փրփրալից։
Եւ լեցուն կեանքով յաւիտեան մատաղ,
Օդի զովութեամբ, արևով փայլուն
Եւ գարնան ծառով, ծաղկունքով չքնաղ,
Զուարճանում է, խնդում է բնութիւն,
Որպէս երեխայ անհոգ և ուրախ։
Տխուր է սակայն բերդը կիսաւեր,
Որ ժամանակով ուրախ էր ու չէն,
Ինչպէս խեղճ ծերուկ, որ ապրում է դեռ,
Այն ինչ մեռած են սիրելիքն ամեն։
Եւ ըսպասում են լուսնի ծագելուն
Անտեսանելի բնակիչքը նորա,

Երբ ասնն է նորանց և ազատութիւն,
Երբոր բզզում են, վազվզում նոքա։
Հինաւուրց սարդը, ճգնաւորը նոր,
Ցանցի հիմքերը գործում է խաղաղ.
Կանաչ մողէսի սերունդը բոլոր
Կիսափուլ կորին խաղում է ուրախ,
Եւ մթին ծակից օձը զգուշաւոր
Դուրս է սողոսկում ոլոր ու մոլոր
Հին պատշգամբի սալաքարի վրայ.
Մերթ օղակ, օղակ գալարւում է նա,
Մերթ երկար շերտով ձգւում է, փայլում,
Նման պողպատեայ սուսերի շեղբին՝
Մոռացուած անցեալ ռազմերի դաշտում
Եւ անպէտք այլևս՝ ընկած հերոսին...
—Ամբողջն է վայրի։ Զը կան իսկ հետքեր
Անցած, գնացած ժամանակներից.
Երկար՝ դստերի ձեռքը ջանասէր
Զնջել է նորանց երկրի երեսից.
Եւ բընաւ մի բան արդ չի յիշեցնի
Իշխան Գուդալի փառաւոր անուն
Եւ կամ դստերը նորա գեղանի։
Սակայն մի տաճար բարձունքին լեռան,
Ուր ամփոփուած են նոցա ոսկորներ,
Այնտեղ զօրութեամբ պահած սրբազան՝
Ամպերի միջից տեսնւում է դեռ.
Եւ որպէս պահակ դռանը կանգնած են
Սև գրանիտ ժայռեր ձեան խաւով ծածկած,

Եւ նոցա կուրծքին, զրահի փոխարէն,
Վառւում է սառոյցն յաւիտենակեաց։
Եւ ձեան հիւսների կոյտեր նիրհալից,
Որպէս ջրվէժներ, ցրտի կապանքով
Ցանկարծ կաչկանդուած, լեռան լանջերից
Շուրջը կախուած են խոժոռած դէմքով։
Բուքն այնտեղ դիշերն հսկում է, չրջում,
Փչելով 'ի բաց պատերի փոչին,
Երբեմըն երկար երգ է մռնչում,
Մերթ ձայն է տալիս պահապաններին։
Լսելով հեռւում լուրը մեծաձայն
Այդ ըսքանչելի, սուրբ եկեղեցու՝
Տար արևելքից ամպերը միայն
Շտապում են խմբով երկրպագելու։
Եւ վաղուց 'ի վեր չէ լալիս ոչ ոք
Քարերի վերայ դերեզմանների։
Մռայլ Կազբէկի ժայռերն անողոք
Պահում են իրենց աւարը գերի.
Եւ չէ խանգարում, լեռների վերան,
Յաւիտենական տրտունջը մարդու
Նոցա հանգիստը յաւիտենական։

Վ Ե Ր Ջ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Библиотека
ՀՍՍՌ-Արա.ССР
Ակ. Ա. Մասիսեանց
Ս. Մեսրոպեանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0310795